ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2017- 17.07/ 592
17.07.2017թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Արթուր Դավթյանին

Հարգելի պարոն գլխավոր դատախազ,

Մեր կազմակերպության կարևոր առաքելություններից է հանդիսանում մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների և իրավապաշտպանների իրավունքների պաշտպանությունը:

2015թ. սեպտեմբերի 11-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (նախագահությամբ դատավոր Ռ. Վարդազարյանի), քննության առնելով ՀՀ ոստիկանության պետի 1-ին տեղակալ Հունան Պողոսյանի միջնորդությունը «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին, որոշել է բավարարել նրա միջնորդությունը և թույլատրել է իրականացնել «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը հնգօրյա ժամկետում «Վելես»հասարակական կազմակերպության նախագահ, իրավապաշտպան Մարիա Հրանտի Պողոսյանի նկատմամբ՝ Երևան քաղաքի Դեմիրճյան 12/14 շենքի 36 բնակարանում և Երևան քաղաքի Իսահակյան 38 հասցեում գտնվող «Բասկինս Ռոբինս» բառ-սրճարանում (որոշման պատճենը ներկայացվում է կից):

Ըստ հարուցված թիվ 14149815 քրեական գործի նյութերի, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. սեպտեմբերի 11-ի նշված որոծումից հետո երեք օր անց, 2015թ. սեպտեմբերի 14-ին, Մ.Պողոսյանը որպես վկա հարցաքննվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ավագ քննիչ Ա.Ս.Վարդանյանի վարույթում գտնվող թիվ 14149815 քրեական գործով (վկայի հարցաքննության արձանագրության պատճենը ներկայացվում է կից): Մոտ մեկ ամիս անց, ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Լ.Յոլչյանը 2015թ. հոկտեմբերի 19-ին որոշում է կայացրել թիվ 14149815 քրեական գործի վարույթը կարճել՝ Մարինա Պողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցակազմի բացակայության հիմքով (որոշման պատճենը ներկայացվում է կից):

Այնուհետև, նոր միայն 2016թ. հուլիսի 28-ին քննչական կոմիտեի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ավագ քննիչ Ս.Մ.Ռաֆաելյանը որոշում է կայացրել թիվ

14149815 քրեական գործով Մարինա Պողոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին (որոշման պատճենը ներկայացվում է կից):

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, (...) կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է իրականացնել **միայն այն դեպքում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ**, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

Մեջբերված իրավանորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ անձի նկատմամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը կարող է անցկացվել բացառապես այն դեպքում, երբ տվյալ անձն արդեն իսկ հարուցված քրեական գործին մասնակցում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կասկածյալի կարգավիճակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կասկածյալ է այն անձը՝

1) որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով.

2) որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված:

Վերոգրյալ հոդվածը համադրելով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ կետի և սույն գործի փաստական հանգամանքների հետ՝ ակնհայտ է դառնում, որ թիվ 14149815 քրեական գործով վկա՝ Մարինա Պողոսյանի նկատմամբ 11.09.2015թ. նշանակված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը եղել է ապօրինի, քանի որ այն ընդունելու ժամանակ Մարինա Պողոսյանը թիվ 14149815 քրեական գործով չի կասկածվել որևե հանցագործության մեջ: Ավելին, վերոնշյալ որոշումը կայացնելուց հետո երեք օր անց, Մ.Պողոսյանը որպես վկա է հարցաքննվել թիվ 14149815 քրեական գործով, այսինքն չի ունեցել կասկածյալի կարգավիճակ: Թիվ 14149815 քրեական գործով Մ. Պողոսյանի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց ընտրվել է միայն 2016թ. հուլիսի 28-ին՝ (որոշման պատճենը ներկայացվում է կից), որով հաստատվում է այն հանգամանքը, որ Մարինա Պողոսյանի նկատմամբ 11.09.2015թ. նշանակված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը կայացվել է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ կետի կոպիտ խախտումներով:

Բացի այդ, Մարինա Պողոսյանը 17.08.2016թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանություն, 2014թ. հունվարի 1-ից մինչ 17.08.2016թ. իր նկատմամբ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացված լինելու մասին տեղեկատվություն ստանալու հարցով:

26.08.2016թ. պատասխան գրությամբ ՀՀ ոստիկանության Քրեական Հետախուզության Գլխավոր վարչության պետի պաշտոնակատար Ս.Ասատրյանը հայտնել է, որ 2014թ. հունվարի 1-ից մինչ 26.08.2016թ. Մարինա Պողոսյանի նկատմամբ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ չեն անցակցվել (գրության պատճենը ներկայացվում է կից): Այսպիսով, ՀՀ ոստիկանությունը տվել է ակնհայտ կեղծ տեղեկություն և իրավապաշտպանից թաքցրել է նրա նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուղական գործողություններ կատարելու մասին տեղեկությունը:

Ելնելով վերոգրյալից, դիմում եմ Ձեզ՝ սույն հաղորդմանը օրենքով սահմանված կարգով ընթացք տալու՝ քրեական գործ հարուցելու, հանցագործություն կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու մասին պահանջով:

Կից ներկայացվում է՝

1. 11.09.2015թ. «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին դատարանի որոշման պատճենը,
2. թիվ 14149815 քրեական գործով 14.09.2015թ. վկայի հարցաքննության արձանագրության պատճենը,
3. 19.10.2015թ. թիվ 14149815 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման պատճենը,
4. թիվ 14149815 քրեական գործով 28.07.2016թ. որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը,
5. թիվ 14149815 քրեական գործով 28.07.2016թ. խափանման միջոց ընտրելու մասին որոշման պատճենը,
6. 26.08.2016թ. ՀՀ ոստիկանության պատասխան գրության պատճենը:

Հարգանքով՝
Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատ.՝ Հ. Հակոբյան
Էլ. հասցե՝ hhakobyan@hcav.am
Հեռ.՝ 094042268